ԱՆՉԱՓԱՀԱՍ ԻՐԱՎԱԽԱԽՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՅՈՒԼԻԱՆԱ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Խոսելով **անչափահաս իրավախախտների** մասին՝ հարկ է հաշվի առնել, որ գործ ունենք կայացման շատ կարևոր փուլում՝ մանկության և հասունության միջև գտնվող անձի հետ, որին բնորոշ է գիտակցության, արժեհամակարգի և հետաքրքրությունների ինտենսիվ վերափոխումը, երբ անչափահասը յուրացնում է նոր հարաբերություններ, հետաքրքրությունների նոր շրջանակ, որոնք հետագայում դառնում են անձի արժեհամակարգի և մոտիվացիայի հիմք:

Դասական առումով **անչափահասների արդարադատություն** ասելով՝ հասկանում են անչափահաս իրավախախտին պատասխանատվության ենթարկելու ողջ գործընթացը, ընդհուպ ներգործության համապատասխան միջոցների կիրառումը (պատիժ, դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ և այլն):

Անչափահասների առաջին դատարանն աշխարհում ստեղծվել է 1899 թ. ԱՄՆ Իլինոյս նահանգում, որի հիմնական գործառույթը պատիժ սահմանելն էր: Ավելի ուշ սկսվեց **երեխայակենտրոն** բարեփոխումների ժամանակաշրջանը, երբ անչափահասների արդարադատության համակարգն ընդունեց, որ քրեական վարքը կենսաբանական հիմքեր չունի, այլ սոցիալական և ընտանեկան միջավայրի ազդեցության հետևանք է, որը կարելի է փոփոխել **սոցիալական վերականգնման** միջոցով: Քրեակատարողական ծառայության մասին ՀՀ օրենքը նախատեսում է ՀՀ կառավարության որոշմամբ դատապարտյալների սոցիալ-հոգեբանական վերականգնման, գիտահետազոտական, բուժական, կրթական և այլ պետական ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման հնարավորություն[1]:

Այսօր **սոցիալական վերականգնումը** ենթադրում է մարդու իրավունքների, սոցիալական կարգավիճակի, առողջության, գործունակության, մոտիվացիայի և արժեքային կողմնորոշումների վերականգնում: Այս գործընթացն ուղղված է սոցիալական միջավայրում անձի կենսագործունեության վերականգնմանը, իսկ **ներառականության գաղափարը միտված է նաև սոցիալական միջավայրը փոփոխելուն՝ անձի կարիքներին համապատասխան**:

Սոցիալական վերականգնման գործիքներում կիրառվում են շեղվող

[1] Տե՛ս «ՀՀ օրենքը քրեակատարողական ծառայության մասին»: Ընդունված է 2005 թվականի հուլիսի 8-ին (տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docID=55538):

վարքը բացատրող **հոգեբանական, սոցիոլոգիական, մշակութաբանական, պիտակավորման, կոնֆլիկտաբանական** և այլ տեսությունների ձեռքբերումները: Սոցիոլոգները մշակել են **սոցիալական անոմիայի** գաղափարը, որը շեղվող վարքը բացատրում է հասարակության նորմերի և արժեքների միջև անհամապատասխանությամբ: Եթե Դյուրկհեյմը[2] «անոմիա» հասկացությունը հիմնականում կապում է արագ փոփոխվող սոցիալական պայմաններում վարքի նորմատիվ կարգավորման թուլացման հետ, ապա Մերտոնի[3] տեսության համաձայն՝ «անոմիան» մշակույթի կառուցվածքային ապակայունացման արդյունք է, որը սոցիալական համակարգում սոցիալ-հոգեբանական տնական յարվածության գործոն է:

Իսկ հայաստանյան հասարակության մեջ խոսքը հենց **տնական, բազմակի** անոմիայի մասին է. հասարակության մեջ մի որևէ որոշակի արժեքանորմատիվ համակարգ դեռ չհասունացած՝ նորից ու նորից ապակառուցվում է: Արժեք-նպատակները պահպանվում են նոմինալ, դեկլարատիվ մակարդակում և չեն դառնում հիմնավորում նորմերի, արժեք-միջոցների համար: Նորմերի և արժեքների միջև անհամաձայնեցվածությունը, անհամապատասխանությունը, հակասությունն այնքան մեծ են, որ արժեքային կոմնորոշումների, նպատակների, գաղափարախոսության, միջոցների և մոտեցումների միջև հավասարակշռություն չի նկատվում: Խնդիրը ավելի է սրվում, երբ այդ իրավիճակում հայտնվում է անչափահասը, որը կատարում է անցում **կախյալ մանկությունից դեպի հասուն տարիքի ինքնուրույնություն և պատասխանատվություն**, ինչն արդեն ենթադրում է արժեք-նպատակների և արժեք-միջոցների ինքնուրույն ընտրության հնարավորություն:

Ըստ Լ. Կոլբերգի՝ դեռահասության տարիքում զարգանում է **կոնվենցիոնալ բարոյականությունը**[4]: Բարոյական նորմերը դեռևս արտաքին պարտադրանքի բնույթ ունեն և խորապես յուրացված չեն դեռահասի անձի կողմից. նա շատ հաճախ պահպանում է նորմերը՝ իր համար կարևոր **ռեֆերենտ** անձանց և խմբերի սպասումներն արդարացնելու, նրանց դուր գալու, հարաբերությունները պահպանելու համար: Եվ հետևաբար պահպանում է այն նորմերը, որոնք բնորոշ են իր համար կարևոր ուրիշներին: Այդ նորմերը շատ արագ փոփոխվում են հենց այդ տարիքում: Ազդեցության տակ ընկնելով՝ երեխան հաճախ կատարում է այնպիսի արարքներ, որոնք ինքնուրույն երբեք չէր ձեռնարկի: Դեռահաս տարիքի յուրահատկությունները նպաստում են, որ նրան սկսեն վերաբերվել որպես հասուն մարդու, և այդ գործընթացն արագացնելու համար նա դիմում է **արտաքնապես հասուն** թվալու հնարքների՝ ծխել, ալկոհոլ օգտագործել, զվարճանալու ձևերը ընդօրինակել, հագուստը և սանրվածքը փոփոխել: Թե հասունության որ մո-

---

[2] Տե՛ս **Дюркгейм Э.** О разделении общественного труда. Одесса, 1900:

[3] Տե՛ս **Мертон Р.** Социальная структура и аномия //Социология преступности. М., 1966:

[4] Տե՛ս **Kohlberg L.** Essays on Moral Development, Vol. I: The Philosophy of Moral Development. San Francisco, CA: Harper & Row, 1981:

դելը կգերակշռի, կախված է դեռահասի անմիջական շրջապատից, հետաքրքրություններից և անձնային առանձնահատկություններից: **Արտաքին հասունությանը զուգահեռ՝ ձևավորվում է սոցիալական հասունությունը**, որն ընդգրկում է նաև դեռահասի կողմից օգտակար հմտություններ ձեռք բերելու և շրջապատին աջակցելու և օգնելու հմտություններ:

Առնվազն հայտարարագրված մակարդակում բոլորի համար արժեք-նպատակ են, օրինակ՝ **վստահությունը, անվտանգության զգացումը, սերը, հոգատարությունը, բարությունը, մարդասիրությունը, ընտանիքը, ծնողները, ընկերները:** Այս հանգամանքն արդեն իսկ հիմք է վերականգնողական աշխատանքների կազմակերպման համար. այն հնարավոր է դարձնում բոլորի համար ընդունելի արժեք-նպատակներին հասնելու գործում անչափահասի վերակողմնորոշումը՝ յուրացնելու նաև սոցիալապես ընդունելի արժեք-միջոցները: Դրա առավել նպատակահարմար տարբերակն է անչափահասի մեջ առաջացնել **մտածողական հակասություն** (կոգնիտիվ դիսոնանս)[5]՝ հնարավորություն տալով նրան նոր ներդաշնակություն (կոնսոնանս) գտնելու:

Ըստ Բոժովիչի՝ կարելի է առանձնացնել անչափահաս իրավախախտների երեք հիմնական խումբ[6].

1. Անչափահասներ, որոնք խախտել են օրենքը և զղջում են կատարածի համար: Այստեղ արդեն իսկ առկա է ներքին կոնֆլիկտ արժեքային դիրքորոշումների և վարքի միջև:

2. Իրավախախտում կատարած անչափահասներ, որոնք չեն զղջում կատարածի համար, նրանք միայն պատժից են վախենում, իսկ արժեքների և սեփական վարքի միջև չկա կոնֆլիկտ, սակայն չկա նաև այդ վարքի արժեքային հստակ հիմնավորում:

3. Իրավախախտ անչափահասներ, որոնք գիտակցաբար հակադրվում են հասարակության բարոյական պահանջներին: Այս խմբի ներկայացուցիչների մեջ ոչ միայն չկա կոնֆլիկտ արժեքային կողմնորոշումների և սեփական վարքի միջև, այլև իրավախախտ վարքը հստակ հիմնավորվում է հասարակության բարոյական նորմերին հակասող փաստարկներով:

Եթե առաջին խմբի ներկայացուցիչների վարքն արդեն իսկ հակասում է ու աններդաշնակ է նրանց արժեքային կողմնորոշումներին, ապա սոցիալական վերականգնումը պետք է ուղղված լինի վարքը արժեհամակարգին համապատասխանեցնելուն, ներդաշնակ ու համաձայնեցված դարձնելուն: Մյուս երկու խմբի ներկայացուցիչների շրջանում պետք է նախ վարքի և արժեքների պահանջների միջև հակասություն առաջացնել, որից հետո պետք կլինի վարքը համապատասխանեցնել հասարակության բարոյական պահանջներին: Սակայն երրորդ

---

[5] Տե՛ս **Фестингер Л.** Теория когнитивного диссонанса, СПб., «Ювента», 1999, էջ 247:

[6] Տե՛ս **Божович Л.** Личность и её формирование в детском возрасте: учебное пособие / Л. И. Божович. СПб., «Питер», 2008, էջ 250:

խմբում դա հատկապես դժվար կլինի անչափահասների շրջանում կայունացած հակասոցիալական դիրքորոշումների պատճառով:

Այս տրամաբանությամբ կատարվող սոցիալական վերականգնումը ներառում է այնպիսի պայմանների և հանգամանքների ստեղծում, որոնք կդրդեն անչափահասին սեփական վարքի քննադատական ինքնագնահատման, սեփական դիրքորոշումների և արժեքների արդյունավետության վերաբերյալ կասկածների առաջացման[7]: Հենց այս իրավիճակում է տեղի ունենում անչափահասի հետաքրքրությունների շրջանակի փոփոխություն, որի շնորհիվ անչափահասն սկսում է ինքն իրեն ընկալել որպես ակտիվ, հասարակության համար պիտանի անձնավորություն: Այս վերականգնողական գործողությունների նպատակն է սեփական աշխարհընկալմամբ ներքին անբավարարվածության խթանումը և ինքնավերլուծության համար պայմանների ստեղծումը: Իրավախախտը պետք է մտահոգվի իր խնդիրների, անհաջողությունների մասին, քննադատորեն վերագնահատի իր դիրքորոշումները և պահանջմունքները: Այս ընթացքում մասնագետները դիտարկում և ախտորոշում են արժեքային կողմնորոշումների և մոտիվացիայի բնույթը, դրանք համեմատում մարդու իրական վարքի հետ: Դիտարկումների միջոցով ի հայտ են բերվում կոնկրետ հակասություններ, որոնք և օգտագործվում են հետագա աշխատանքի ընթացքում: Մասնագետները անչափահասին աստիճանաբար ներկայացնում են դիտարկումների արդյունքները՝ առերեսելով նրան իր վարքի և դիրքորոշումների միջև եղած հակասությունների հետ, ինչը և ձևավորում է վարքը փոխելու և դիրքորոշումները վերագնահատելու ցանկություն:

Վերականգնողական աշխատանքների նման մոտեցման հիմնական վտանգը ֆրուստրացիայի բարձր հավանականությունն է և մասնագետների հետ հետագա համագործակցությունից հրաժարվելը: Նշված ռիսկերից խուսափելու համար անհրաժեշտ է աշխատանքի ողջ ընթացքում վերահսկել ձևավորված մոտիվացիայի կայունությունը և ամրապնդել դրական արդյունքները: Կարևոր է նաև սոցիալական վերականգնման ընթացքում անչափահասի մոտ ձևավորել **հաջողությունը, ձեռքբերումները գնահատելու** էմոցիոնալ վիճակ:

Իրավախախտում կատարած անչափահասի գիտակցության մեջ պետք է ձևավորվեն ակնկալվող հավանական արդյունքը և հնարավոր հետևանքները: Ցանկալի է ձևավորել երկարաժամկետ նպատակներ՝ այնուհետև տրոհելով դրանք ավելի փոքր և հստակ խնդիրների, որոնց լուծման գործընթացը կդառնա սոցիալական վերականգնման բովանդակությունը: Այս խնդիրները լուծելու համար քայլերը պետք է լինեն իրատեսական, որպեսզի հաջողությամբ ա-

[7] Տե՛ս **Антропова Ю.** Социальная реабилитация несовершеннолетних, находящихся в трудной жизненной ситуации, в современных условиях (региональный опыт) // «Вестник Челябинского государственного университета», 2010, # 31 (212). Филисофия. Социология. Культурология. Вып. 19, էջ 138-142:

վարտվեն: Իսկ հաճախադեպ անհաջողությունները պետք է դիտարկվեն որպես տվյալ դեռահասի կարողությունները գերազանցող պահանջների հետևանք, և նման խնդիրները պետք է պարզեցվեն: Այն նպատակը, որին ձգտում է դեռահասը, կդրդի նրան վերագնահատելու իր դիրքորոշումը և աշխարհընկալումը: Մասնագետների հիմնական նպատակն է գիտակցական մակարդակի հասցնել անչափահաս իրավախախտի դրության հակասականությունը: Նա պետք է հստակ գիտակցի իր գործողությունները և դրանց հնարավոր հետևանքները, վերահսկի իր ներքին մղումները և դրանց համապատասխանությունը սոցիալական արժեքներին ու նորմերին, գիտակցաբար ընտրի այնպիսի նպատակներ, որոնք սոցիալապես ընդունելի են, իսկ դրանց հասնելու քայլերն ու գործողությունները մտածված և գիտակցված լինեն:

Այս գործողությունների համալիր բնույթը պահանջում է, որ սոցիալական վերականգնումն իրականացնի բազմամասնագիտական թիմը, որում ընդգրկված լինեն մանկավարժներ, հոգեբաններ, իրավաբաններ, սոցիալական աշխատողներ, արթ-թերապևտներ և այլ նեղ մասնագետներ: Սոցիալական աշխատողի կարևորագույն նպատակն է նախապատրաստել և սկսել անչափահասի վերականգնման գործընթացը դեռևս **նախաքննության փուլում**: Երբ անչափահասը ներգրավված է որպես մեղադրյալ, սոցիալական աշխատողի կարևորագույն դերն է հանդես գալ **«սոցիալական զեկույցով»**, որտեղ մանրամասնորեն կբացատրվեն անչափահասի գործած հանցանքի պատճառները, ինչը կօգնի ընտրել սոցիալական վերականգնման ռազմավարությունը, թույլ կտա հիմնավոր առաջարկություններ անել պատիժը կրելու ընտրության և վերականգնման պլանի վերաբերյալ: «Սոցիալական զեկույցների» օգտագործումը դատավճիռը կայացնելու գործընթացում հնարավորություն է տալիս դեպքի քննարկման ժամանակ հաշվի առնելու բազմաթիվ առանձնահատկություններ, որոնք հետագայում հիմք են դառնում անչափահասի արդյունավետ **ռեսոցիալականացումը** կազմակերպելու համար:

Անչափահասի հետ կատարվող վերականգնողական բոլոր գործողությունները բխում են **երեխայի լավագույն շահից**: Իսկ դա նշանակում է երեխայի այնպիսի բարեկեցություն, որի վերջնական նպատակը նրա անվտանգությունն է և առաջնահերթ կարիքների բավարարումը[8]: Բարեկեցությունը որոշվում է մի շարք հանգամանքներով՝ տարիքը, երեխայի հասունության մակարդակը, ծնողների ներկայությունը կամ բացակայությունը, երեխայի սոցիալական ցանցը (դպրոց, ընկերներ, մասնակցություն մշակութային կյանքին, սոցիալ-մշակութային խմբակներին և այլն):

---

[8] Տե՛ս «UNHCR Guidelines on Determining the Best Interests of the Child», 2008 (http://www.unhcr.org/4566b16b2.pdf):

Որոշ պետությունների, օրինակ՝ ԱՄՆ-ի մի շարք նահանգների օրենքներում հստակ առանձնացվում են որոշակի սկզբունքներ, որոնց վերլուծության հիման վրա սահմանվում է «երեխայի լավագույն շահը»: Դրանք են՝ ընտանեկան ամբողջականության և նախասիրությունների կարևորությունը, երեխայի առողջությունը, անվտանգությունը և պաշտպանությունը, համոզվածություն այն բանում, որ երեխային կտրամադրվի անհրաժեշտ խնամք, բուժում և ուղղորդում: «Երեխայի լավագույն շահը» սահմանվում է՝ հաշվի առնելով մի շարք գործոններ (էմոցիոնալ կապեր ու հարաբերություններ երեխայի և նրա ծնողի/ների/խնամակալ/ների, ընտանիքի անդամների հետ, ծնողի/ների/խնամակալ/ների հնարավորությունները երեխային ապահովելու անվտանգ միջավայրով, համապատասխան սննդով, հագուստով և բժշկական խնամքով, երեխայի և ծնողների մտավոր ու ֆիզիկական առողջությունը, ընտանեկան բռնության դեպքերն ընտանիքում և այլն): Հաշվի են առնում նաև երեխայի կարծիքը և ցանկությունները:

Սոցիալական վերականգնումը ներառում է ինչպես անչափահասի, այնպես էլ նրա սոցիալական միջավայրի հետ աշխատանք: Սոցիալական վերականգնման ընթացքում պետք է բացահայտվեն շեղվող վարքին նպաստող միջավայրային գործոնները, այդ թվում՝ սոցիալական ապահովվածության մակարդակը, սոցիալականացման խնդիրները:

Անչափահասի սոցիալական վերականգնման պլան կազմելու համար անհրաժեշտ է՝

- պարզել հանցագործության դրդապատճառները,
- իրականացնել կարիքների գնահատում,
- գնահատել մեղադրյալի սոցիալ-հոգեբանական վիճակը,
- կազմակերպել երեխայի հետ խորհրդատվություն,
- կազմակերպել ընտանիքի հետ խորհրդատվություն,
- կազմակերպել տուժողի հետ հաշտեցման գործընթացը,
- անհրաժեշտության դեպքում հանդես գալ երեխայի պատժի իրականացման ձևերի վերաբերյալ առաջարկություններով [9]:

Սոցիալական ցանցի հետ աշխատանքը ենթադրում է հանդիպումներ և քննարկումներ դրա անդամների հետ երեխայի հետագա սոցիալական վերականգնման գործընթացի վերաբերյալ, համագործակցություն տվյալ սոցիալական դեպքի հետ առնչվող բոլոր գործակալությունների և շահագրգիռ կողմերի հետ, որոնք ևս կստանձնեն պարտավորություններ այդ գործընթացում: Առանձնահատուկ կարևորվում է ոստիկանության, անչափասների գործերով բաժանմունքների, սոցիալական ծառայությունների, խնամակալության և հոգաբարձության մարմինների, ՏԻՄ-երի, դաստիարակչական և կրթական կա-

[9] Տե՛ս **Раченкова Л.** Социальная реабилитация несовершеннолетних, находящихся в конфликте с законом, в процессе социального проектирования: Методические рекомендации. Барнаул: Главалтайсоцзащита, 2013:

ռույցների միջև համագործակցության ցանցի ընդլայնումը:

Անչափահաս իրավախախտների սոցիալական վերականգնման գործընթացը պարտադիր ենթադրում է.

- սոցիալական օգնություն,
- ընտանեկան ու սոցիալական խեղված կապերի և գործառույթների վերականգնում,
- սոցիալական կարգավիճակի վերականգնում,
- հոգեբանական օգնություն, ռեադապտացիա,
- վարքի շտկում,
- մասնագիտական կողմնորոշում,
- կրթական ծրագրերում ընդգրկում,
- աշխատանքի տեղավորում,
- սոցիալական հմտությունների զարգացում,
- իրավունքների և պարտականությունների մասին իրազեկվածության մակարդակի բարձրացում,
- ժամանցի կազմակերպում[10]:

Սոցիալական վերականգնման այս բոլոր նպատակների իրականացումը հնարավոր է, եթե իրավախախտ անչափահասների շրջանում հաճախ հանդիպող այնպիսի վարքային դրսևորումներ, ինչպիսիք են ծուլությունը, անպատասխանատվությունը, կոնֆորմիզմը, ագրեսիվությունը, անտարբերությունը, զվարճանքների նկատմամբ գերիակվածությունը, ժամանցային մշակույթի բացակայությունը ոչ թե անձնային շեղումներ են, այլ վարքային: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ժամանցի կազմակերպմանը՝ կանխելու համար անչափահասի կողմից ժամանակի աննպատակ վատնումը, որն ինքնին շեղվող վարքի նախադրյալ է, ինչպես նաև աշխատասիրության խրախուսմանը ռեֆերենտ խմբում դրական օրինակների միջոցով: Ընդ որում՝ չի կարելի թերագնահատել անչափահասի՝ զվարճանալու և հաճույք ստանալու բնական ցանկությունը, որը պետք է կապել սոցիալապես ընդունելի վարքի նմուշների հետ:

Սոցիալական վերականգնման մոդելների բազմության մեջ Ռեմշմիդտը առանձնացնում է հետևյալ հիմնական տիպերը:

1. **Ստեղծագործական ինքնաիրացման ծրագրեր**, որոնք անչափահասի վարքի շտկման գործընթացում շեշտը դնում են անչափահասի ստեղծագործ ակտիվության միջոցով իր անհատականությունը և կարևորությունը հասարակության համար ցույց տալու վրա:

2. **Աշխատանքային թերապիայի ծրագրեր**, որոնց հիմնական նպատակն է անչափահասի աշխատանքային և մասնագիտական հմտությունների զարգացումը:

3. **Սոցիալական ինքնաիրացման ծրագրերը**, որոնք ենթադրում են անչափահասի ներառում արտադպրոցական խմբակներում՝ արվես-

[10] Տե՛ս «Introductory Handbook on the Prevention of Recidivism and the Social Reintegration of Offenders». Criminal justice handbook series. United Nations office on drugs and crime, Vienna, 2018:

տի, սպորտի ակումբներ և այլ[11]:

Արժեքային և մոտիվացիոն կողմնորոշումների շտկումը, անհրաժեշտ արդյունքի խորը գիտակցումը, սոցիալապես ընդունելի ձևերով պահանջմունքների և ցանկությունների բավարարման մոտիվացիայի ձևավորումը, ուղղվելու մոտիվացիան սկսվում են անչափահասի վրա **արտաքին ազդեցությունից**: Դա կարող է արվել ֆիլմեր դիտելու, դերային խաղերի, արթ-թերապիայի, աշխատանքային թերապիայի, սպորտի, խաղերի, հանրային միջոցառումների և այլ միջոցներով:

Այսպիսով՝ կոնվենցիոնալ բարոյականության փոխակերպումների փուլում գտնվող դեռահասների սոցիալական վերականգման մեթոդաբանությունը հիմնվում է համընդհանուր արժեք-նպատակների և սոցիալապես ընդունելի արժեք-միջոցների միջև մտածողական ներդաշնակության հասնելու գաղափարի վրա: Այս միջամտության ընթացքում հաշվի են առնվում ինչպես անչափահասների արժեքային կողմնորոշումների և դիրքորոշումների առանձնահատկությունները, այնպես էլ երեխայի լավագույն շահի ցուցիչները: Իսկ սոցիալական վերականգնման գործընթացը հագեցած է սոցիալական, կրթական, մշակութային, աշխատանքային և ժամանցային թերապիաների ողջ գործիքակազմով:

Բանալի բառեր – *սոցիալական վերականգնում, մտածողական հակասություն, սոցիալական անոմիա, արժեք-նպատակ, արժեք-միջոց, երեխայի լավագույն շահ*

ЮЛИАНА МЕЛКУМЯН – *Особенности социальной реабилитации несовершеннолетних правонарушителей.* – Период жизни между детством и зрелостью характеризуется интенсивными трансформациями сознания, системы ценностей и интересов. Поэтому социальная реабилитация несовершеннолетних правонарушителей не только важный, но и чрезвычайно сложный процесс. В статье проанализированы возможности социальной реабилитации несовершеннолетних правонарушителей в рамках теории социальной аномии Р. Мертона, а также теории когнитивного диссонанса Л. Фестингера.

Ключевые слова: *социальная реабилитация, когнитивный диссонанс, социальная аномия, ценности-цели, ценности-средства, наилучшие интересы ребёнка*

YULIANA MELKUMYAN – ***Social Rehabilitation of Juvenile Offenders.*** – The period of life between childhood and adulthood is characterized by intense transformations of consciousness, the system of values and interests. Therefore, social rehabilitation of juvenile offenders is not only an important but also an extremely complex process. The article analyzes the possibilities of social rehabilitation of juvenile offenders in the framework of Merton's theory of social anomie and Festinger's theory of cognitive dissonance.

Key words: *social rehabilitation, cognitive dissonance, social anomie, values-goals, values-means, child's best interests*

Ներկայացվել է՝ 25.12.2018, գրախոսվել է՝ 01.03.2019, ընդունվել է տպագրության՝ 22.04.2019

---

[11] Տե՛ս «Насилие в семье», учеб. пособие для студентов спец. «Юриспруденция» / Ю. М. Антонян, И. В. Горшков, Р. М. Сапрунов, А. Г. Сапрунов. М.: ВНИИ МВД РФ, 1999: